ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԵՆԳՈՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՋՈՒԳԱՁԵՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՏԻՊԵՐԸ Ե. ԴԱՐԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

Լեզվի զարգացման համաժամանակյա (եւ տարժամանակյա) կտրվածքում միեւնույն բառույթի տարբերակային ձեւերը ստեղծում են քերականական զուգաձեւություն, որի բաղադրիչները ծառայում են միեւնույն քերականական իմաստի դրսեւորմանը: Զուգաձեւությունն առավելապես վերաբերում է լեզվի կառուցվածքային միավորներին՝ բառաձեւերին, որոնք հաճախ տարբեր ձեւերով (զուգահեռ թեքույթներով) կարող են արտահայտել տվյալ հարացուցային միավորին հատուկ (միեւնույն) քերականական իմաստը:

Դիտարկենք գրաբարում գոյականի *հոլովական զուգաձեւությունները*, որոնք հանդես են գալիս **սեռական հոլովում:** Զուգաձեւությունները ներկայացնելու ենք որոշակի դասակարգումով, որով կարելի է ցույց տալ դրանց կառուցատիպերի համակարգային դրսեւորումները գրաբարում: Ուսումնասիրության բնագիր ենք ընտրել Խորենացու, Փարպեցու, Եղիշի, Բուզանդի եւ Ագաթանգեղոսի պատմագրական երկերը:

Հոլովական զուգաձեւությունները կարելի է դիտարկել երկու կտրվածքով՝

ա) թվի առումով (եզակի եւ հոգնակի),

բ) տեսակի առումով (հատուկ եւ հասարակ):

Պատմիչների երկերի ընձեռած նյութի շրջանակներում կատարելով հոլովային զուգաձեւությունների քննություն՝ մենք առանձնացրել ենք զուգաձեւությունների հետեւյալ տիպերը. Ո//Ի, Ի//Ա, Ո//Ու, Ու//Ան, Ա//Ու, Ի//Ու, Ա//Ո, Եան//Ո, Եան//Ի, Ø//Ա կամ Ø//Ո[1]:

[1] Գրաբարի հոլովական զուգաձեւություններին անդրադարձել են Լ. Հովսեփյանը եւ Շ. Ասլիբեկյանը (տես «Հոլովական զուգաձեւությունները գրաբարում», Հայագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, («Հայագիտությունը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրավերները»), Երեւան, 2014, էջ 286-289):

1. **Ո//Ի**. Գրաբարում այս հոլովիչներով զուգաձեւություն են ստեղծում Ո հոլովիչով թեքվող հետեւյալ բառերը՝ **աղանդ** (աղանդոյ[1]-աղանդի[1]), **աւերած** (աւերածոյ[1]-աւերածի[1]) [Եղիշե], **ընգեր** (ընկերոյ[1]-ընգերի[1]), **աղանդ** (աղանդոյ[4]-աղանդի[1]), **տեղ** (տեղոյ[2]-տեղի[1]) [Բուզ.], **թիւ** (թուոյ[1]-թուի[2]), **ժողով** (ժողովոյ[6]-ժողովի[1]) [Խոր.]: Օրինակ՝

Աղանդ – Խորհեցան մոլեկան արիանոսացն **աղանդոյն** վարդապետք (Բուզ., 81): Որպէս կամեցաւ պայքար առնել ի մէջ ձախող **աղանդին** արիանոսաց (Բուզ., 51):

Հոգնակի թվում զուգաձեւություն է դրսեւորում **վաներայ** գոյականը՝ **վաներայոց**[1] – **վաներայից**[2] [Բուզ.] տարբերակներով. Որ յայնմու ժամանակի գլխաւոր էր աբեղայից Հայոց անապատաւորաց մենակեցաց **վանեբայոց** (Բուզ., 220): Գինդս այս յետ նորա էր գլուխ աբեղայից ... եւ վերակացու **վաներայից** (Բուզ., 230):

Այսպիսով, վերոնշյալ բառերի զուգաձեւությունների մեջ գերակշռում են Ո հոլովիչով ձեւերը:

Զուգաձեւության այս կառուցատիպի մեջ են մտնում այն բառերը, որոնք թեքվում են Ի հոլովիչով: Ըստ այդմ, Ի//Ո զուգաձեւություն են դրսեւորում գերազանցապես հասարակ անունները, ինչպես՝ **գոյժ** (գուժի[2]-գուժոյ[1]), **խորհուրդ** (խորհրդի[1]-խորհրդոյ[2]), **պատիւ** (պատուի[5]-պատուոյ[2]) [Բուզ.], **բաժին** (բաժնի[1]-բաժնոյ[1]), **գեհենն** (գեհենի[6]-գեհենոյ[1]), **լեզու** (լեզուի[1]-լեզուոյ[2]), **պատիւ** (պատուի[2]-պատուոյ[14]) [Փարպ.], **ամբոխ** (ամբոխին[4]-ամբոխոյ[1]), **բաժին** (բաժնի[4]-բաժնոյ[1]), **հաւատ** (հաւատի[1]-հաւատոյ[2]) [Խոր.]: Օրինակ՝

Ամբոխ – Յելանելն մեր հանդեպ **ամբոխին** Բելայ՝ դիպել ջանասցուք տեղւոյն (Խոր., 35): Ի վեր զերեսս ամբարձեալ՝ երեւեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի **ամբոխոյն** Բելայ (Խոր., 35):

Հանդիպում են հատուկ անունների զուգաձեւության դեպքեր՝ Ի հոլովիչի բացարձակ գերակշռությամբ, ինչպես՝ **Գրիգոր** (Գրիգորի[36]-Գրիգորոյ[1]) [Բուզ.],Պահլաւ (Պահլաւի[6]-Պահլաւոյ[1]) [Խոր.]. Կոտորեաց զամենայն ցեղ Կարենեան **Պահլաւին** (Խոր., 209): Յիշեցի զերախտիս նախնեաց հարցն դորա, որք էին նահապետք Սուրենեան **Պահլաւոյ** (Խոր., 324):

Ընդհանուր առմամբ դիտարկվող զուգաձեւություններում գերակշռում են Ի հոլովիչով ձեւերը:

2. **Ի//Ա**. Այս հոլովիչներով զուգաձեւություն են դրսեւորում հիմնականում հատուկ անունները՝ **Վահրիճ** (Վահրիճի[1]-Վահրճայ[2]) [Բուզ.], **Աղիովիտ** (Աղիովտի[3]-Աղիովտայ[1]), **Հերակլէս** (Հերակլի[2]-Հերակլեայ[3]), **Վրթա-**

նէս (Վրթանիսի[1]-Վրթանայ[1]) [Խոր.]. Յաղագս **Վահրիճի**, որ ... տայր պատերազմ ընդ թագաւորին Հայոց (Բուզ., 53)։ Յաղագս **Վահրճայ**, որ ... տայր պատերազմ ընդ Արշակայ արքային (Բուզ., 125)։

Որոշ հասարակ անուններ զուգաձեւություն են դրսեւորում հոգնակի սեռականում. **բերդք** (բերդից[3]-բերդաց[1]), **վիշտք** (վշտից[1]-վշտաց[1]) [Եղիշե]։ Օրինակ՝

Բերդ – Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ **բերդիցն** եւ քաղաքաց (Եղ., 77)։ Երկու մեծամեծ **բերդացն** պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան (Եղ., 70)։

Այս կառուցատիպի մեջ են մտնում այն հասարակ եւ հատուկ անունները, որոնք թեքվում են Ա հոլովիչով։ Հմմտ. **ալսոյեան** (ալսոյենայ[1]-ալսոյենից[2]), **արուեստք** (արուեստաց[1]-արուեստից[1]), **գունդ** (գնդաց[4]-գնդից[1]), **կանոն** (կանոնաց[1]-կանոնից[4]), **տոհմ** (տոհմաց[4]-տոհմից[1]) [Բուզ.], **խոզ** (խոզաց[2]-խոզից[1]) [Ագաթ.]։ Օրինակ՝

Գունդ – Ապա յերիցուսց **գնդացն** միմեանց դիպէին աւետաւորքն յաղթութեանցն (Բուզ., 118)։ Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ ... **գնդից** եւ դրօշաց տեարք (Բուզ., 57)։

Պատմիչների երկերում հազվադեպ հանդիպում են հատուկ անուններ, որ Ա//Ի զուգաձեւություն են դրսեւորում, այսպես՝ **Մուշեղ** (Մուշեղայ[4] – Մուշեղի[23]) [Բուզ.], **Դաւիթ** (Դաւթայ[1]- Դաւթի[1]) [Կոր., Ագաթ.], **Համայեակ** (Համայեկայ[3]-Համայեկի[1]) [Փարպ.], **Անտոնիոս** (Անտոնեայ[1] - Անտոնիոսի[2]), **Կրիւսիոս** (Կրիւսեայ[3]-Կրիւսոսի[2]), **Առաւեղինք** (Առաւեղինաց[1]-Առաւեղինից[1]), **Հայկ** (Հայկայ[15] - Հայկի[2]) [Խոր.]. Զայս իմացեալ աղեղնաւորին **Հայկայ**՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն (Խոր., 36)։ Զկնի այսորիկ դառնալ ասէ **Հայկին** ի նոյն տեղի բնակութեան ... (Խոր., 37)։

Այսպիսով՝ դիտարկվող հոլովիչները գրեթե հավասար գործածություն ունեն զուգաձեւության եզրերում։

3. **Ո//Ու**. Այս հոլովիչներով զուգաձեւություն են դրսեւորում թե՛ հատուկ եւ թե՛ հասարակ անունները (միայն եզակի թվով). **Շապուհ** (Շապուհոյ[47]-Շապհու[1]), **Տարօն** (Տարօնոյ[11]-Տարօնու[1]) [Բուզ.], **Այրարատ** (Այրարատոյ[4]-Այրարատու[2]) [Փարպ.]։

Օրինակ՝ Յաղագս Հայր մարդպետի, որ եկն էջ ի գաւառն **Տարօնոյ** (Բուզ., 96)։ ... Որ էր յերկրին **Տարօնու** (Բուզ., 7)։ Չուեցին միաբան ամենեքեան ի գաւառն **Այրարատոյ** (Փարպ., 67)։ Թողոյր զգաւառն **Այրարատու** (Փարպ., 9)։

Հասարակ անուններ. **համար** (համարոյ[3]-համարու[1]) [Եղիշե], **երէց** (երիցոյ[1]-երիցու[2]), **համբաւ** (համբաւոյ[1]-համբաւու[1]), **չափ** (չափոյ[2]-չափու[2]) [Բուզ.]: Օրինակ՝

Համար – Լուաւ զթիւ **համարոյ** բազմութեանն (Եղ., 96): Լինէր հանդէս **համարուն** վաթսուն եւ վեց հազար այր ընդ հեծեալ եւ ընդ հետեւակ (Եղ., 100):

Այս հոլովիչներով զուգաձեւության դրսեւորումների մեջ գերակշռում են Ո հոլովիչով ձեւերը:

Զուգաձեւության այս կառուցատիպի մեջ է մտնում բիւր գոյականը, որ ենթարկվում է Ու հոլովման. Խորենացու մատյանում հանդիպում է **Ու//Ո** հոլովիչներով հոգնակի թվում. **բիւրուց**[45]-**բիւրովք**[47]. Իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ, իշխան **բիւրուց** եւ հազարաց, յարեւմտից կուսէ (Խոր., 105): Եւ գունդս եւ պահապանս դրան արքունի կարգէ գչորս, զմի մի իւրաքանչիւր **բիւրովք** վառելովք ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն (Խոր., 111)[2]:

4. **ՈՒ//Ան**. Գրաբարում այս հոլովիչներով զուգաձեւություն է ստեղծում **մահ** գոյականը՝ սեռական հոլովում հանդես գալով **մահու-մահուան** տարբերակներով[3]: Վերոնշյալ պատմիչների երկերում **մահ** բառը Ու հոլովիչով գործածվել է 114, Ան հոլովումով՝ 90 անգամ:

Օրինակ՝ Յայնժամ հասեալ մեծին Սահակայ հիւանդութիւն **մահու** (Բուզ., 355): Վասն **մահուն** Դղակայ ի Պապայ արքայէ (Խոր., 153): Ոչ թողում հօրեղբօր իմում զվրէժ **մահուան** հօր իմոյ (Խոր., 282): Որպէս երէցն Մրջիւնիկն **մահուան** դեղովն զնա ընդ օրէնսն սպանանէր՝ խորհրդով Փառանձեմայ (Բուզ., 99):

5. **Ա//Ու**. Այս հոլովիչներով զուգաձեւություն են ցուցաբերում հիմնականում հատուկ անունները. **Յովսեփ** (Յովսեփայ[1]-Յովսեփու[1]) [Եղիշե], **Եփրատ** (Եփրատայ[1]- Եփրատու[1]), **Խոսրով** (Խոսրովայ[1]-Խոսրովու[20]), **Զորթուազ** (Զորթուազայ[1]-Զորթուազու[1]) [Բուզ.], **Աբրահամ** (Աբրահամայ[2]-Աբրահամու[1]), **Խոսրով** (Խոսրովայ[1]-Խոսրովու[6]), **Յոհան** (Յոհանայ[4]-Յոհանու[4]) [Փարպ.], **Անտիոք** (Անտիոքայ[6]-Անտիոքու[1]), **Խոսրով** (Խոսրովայ[29]-Խոսրովու[16]) [Խոր.]. Ոչ յիշեմ ես ամենեւին, եթէ բան մի տրտունջ յումեքէ լուեալ վասն քո, սոյնպէս եւ առաւել վասն **Յովսեփայ** (Եղ., 169): Եւ ի ձեռն սրբոյն **Յովսեփու** եպիսկոպոսի նովին ուխտիւ հաստատեալ խաղացին

[2] Հոգնակի սեռականի **բիւրոց** ձեւը Խորենացու երկում չի հանդիպում:

[3] Հայագիտության մեջ այն կարծիքը կա, որ այս բառը **մահ** ձեւի հետ նախապես ունեցել է **մահուն** տարբերակը (տես Ստ.Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները, Թիֆլիս, 1891, էջ 25-26:

գնացին ի դուռն արքունի (Եղ., 43)։ Զինուորեալ ի դուռն Հայոց արքային **Խոսրովայ** (Փարպ., 13)։ Դրոշմեաց զքինախնդրութիւնն **Խոսրովու** (Փարպ., 2)։

Ընդհանուր առմամբ, Ա//Ու հոլովիչներով զուգաձեւություն դրսեւորող բառերի մեջ գերակշռում են Ա հոլովիչով ձեւերը։

6. **Ի // Ու.** Այս հոլովիչներով զուգաձեւություն են դրսեւորում հիմնականում հասարակ անունները. **առաւօտ** (առաւօտի[1]-առաւօտու[1]), **գանձ** (գանձի[1]-գանձու[1]), շաբաթ (շաբաթի[1]-շաբաթու[1]), **սան** (սանի[1]-սանու[1]) [Բուզ.], **վնաս** (վնասից[1]-վնասուց[2]) [Փարպ.]։ Օրինակ՝

Գանձ - Ամենայն ոք յիւրաքանչիւր տեառն Աստուծոյ գեղեալ ուխտս կատարէին, որ ի վերայ հոգեւոր **գանձին** հայրապետին (Բուզ., 93)։ Մեծարեցաւ ի նմանէ բազում **գանձու** ոսկւով եւ արծաթով (Բուզ., 105)։

Խորենացու երկում հանդիպում է **Յուլիանոս** հատկանունը Ի//Ու հոլովիչներով Յուլիանոսի[4] – Յուլիանու[3] գործառական հաճախականությամբ. Եթէ զիարդ Տիրան իջեալ ընդ առաջ **Յուլիանոսի**, պատանդս տայ (Խոր., 251)։ Բայց սուրհանդակքն **Յուլիանու** յառաջ ժամանեն քան զգալն նորա (Խոր., 273)։

Այսպիսով՝ գրաբարում Ի//Ու հոլովիչները զուգաձեւություն են դրսեւորում գրեթե հավասար չափով։

Ու//Ի զուգաձեւություն են դրսեւորում ժամանականիշ **աւր, դար** հասարակ անունները եւ **Աղրիանոս, Նախճաւան** հատկանունները։ Հմմտ. **աւր** (աւուր[2]-օրի[1]), **դար** (դարու[3]-դարի[1]) [Ագաթ.], **Աղրիանոս** (Աղրիանու[1]-Աղրիանոսի[1]), **Նախճաւան** (Նախճաւանու[2]-Նախճաւանի[1]) [Խոր.]։ Օրինակ՝

Դար - Եւտուր յողող ջուրց զանօրէն պղծալից մարդիկ ութերորդ **դարուն** (Ագաթ., 93)։ Մեկնեցաւ առակն յաւուրս Նոյեան **դարին** (Ագաթ., 281)։

Նախճաւան - Յորոց մինն է Վրանջունիք, մինչեւ հանդէպ ամրոցին **Նախճաւանու** (Խոր. , 83)։ Զորոց պեղեալ երկուս հորս ... որ ի շինին **Նախճաւանի** (Խոր., 296)։

Ու//Ի հոլովիչներով զուգաձեւություն են ստեղծում սահմանափակ թվով բառեր։

7. **Ա//Ո.** Այս հոլովիչներով զուգաձեւություն են դրսեւորում հիմնականում հատուկ անունները. **Գնել** (Գնելայ[1]-Գնելոյ[13]), **Արշակունիք** (Արշակունեաց[20]-Արշակունւոց[3]) [Բուզ.], **Գնել** (Գնելայ[2]-Գնելոյ[13]), **Բասեն** (Բասենոյ[3]-Բասենայ[1]) [Խոր.], **Նիխոր** (Նիխորայ[1]-Նիխորոյ[28]), **Անձեւացիք** (Անձեւացեաց[8]-Անձեւացւոց[1]) [Փարպ.]։

Օրինակ՝ Սկսաւ դնել թշնամանս ազգին **Արշակունեաց** (Բուզ., 145)։ Եհաս նա մինչեւ ի ճամբար բանակին **Արշակունւոց** (Բուզ., 121)։ Առաքէր զօրաւարն Հայոց Մամիկոնեանն Վահան ... յազգս գաւառին **Անձեւացեաց** եւ Մոկաց (Փարպ., 126)։ Օգնելով նմա եւ **Անձեւացւոց** սեպհին Յոհանայ՝ յերկիր կործանէին (Փարպ., 127)։

Հինգերորդ դարում Ա//Ո հոլովիչներով զուգաձեւություն ցուցաբերող բառերի մեջ չափազանց կենսունակ է Ո հոլովիչը։

8. **Եան // Ո** հոլովիչներով զուգաձեւություն ցուցաբերող բառերից մատենագիրների երկերում գործածվել են **ծնունդ** (Ագաթ.) եւ **խորհուրդ** (Փարպ.) բառերը, ընդ որում գերակշռում են *-եան* թեքույթով ձեւերը։ Օրինակ՝

Ծնունդ – Հասեալ իցեն ի ժամանակս **ծննդեան** (Ագաթ., 321)։ Այնր **ծննդոյ** Հօր ... նա միայն գիտէ (Ագաթ., 195)։

Խորհուրդ – Կոչէր այնուհետեւ Նիխոր զԾապուհ **խորհրդեան** դպիր (Ագաթ., 163)։ Ընթանային խնդալիցք ի հաղորդմանէ մեծի **խորհրդոյն** (Ագաթ., 17)։

9. **Եան//Ի**. Այս թեքույթներով զուգաձեւություն են դրսեւորում այն բառերը, որոնք ունեն **-ուրդ** կամ **-իստ** ածանցներ։ Բնագրերում հանդիպում են **ժողովուրդ** եւ **հանգիստ** բառերը, ինչպես՝ **ժողովուրդ** (ժողովրդեան[5]-ժողովրդի[1]), **հանգիստ** (հանգստեան[4]-հանգստի[2]) [Ագաթ.]։ Օրինակ՝

Ժողովուրդ – Յանօրէնութեանցն **ժողովրդեան** իմոյ ի մահ վարեցաւ (Ագաթ., 228)։ Նաւիցեմք զալեօք ... պատմել յազգ յայլ **ժողովրդին** ստացելոյ (Ագաթ., 12)։

10. **Ø//Ա կամ Ø//Ո.**

Երբեմն հոլովական հարացույցում զուգաձեւություն են ստեղծում եղած եւ չեղած հոլովիչները. սա հիմնականում վերաբերում է անկանոն կամ զարտուղի հոլովում ունեցող բառերին, որոնք սեռական հոլովում քերականական իմաստն արտահայտում են հերթագայության միջոցով (այր>առն, հարք>հարց)։ Գրաբարի հոլովման համակարգում հերթագայությամբ արտահայտված թեք ձեւերի կողքին հանդիպում են հոլովիչներով ձեւեր, որոնք դիտվում են միեւնույն իմաստի արտահայտման քերականական տարբերակներ։ Այդպիսի հոլովական կառուցատիպեր են ստեղծում **հայր, աղբիւր, ջուր** բառերը։ Օրինակ՝

Հայր – Իսկ որդիքն արդարի՝ վասն **հարցն** մեղաց ընդունին զսատակումն (Եղ., 56)։ Որպէս **հարանց** մերոց ուխտեցին երդմամբ (Փարպ., 119)։

Աղբիւր - Վտակի երկոտասան **աղբերցս** քարոզութեան՝ գջուրսն մկրտութեան աւազանին հրացուցին (Փարպ., 179)։ Այս հորդաբուղխ **աղբերաց** շնորհի, նման Եդեմեան դրախտին աղբեր, զորմանէ ասէ (Փարպ., 179)։

Դիտարկվող օրինակներում հերթագայությամբ հոլովաձևերը գերակշռում են։

Գրաբարում հազվադեպ հանդիպում են դեպքեր, ուր զուգաձևություն ստեղծում են երեք հոլովիչներ։

Այսպես, Մ.Խորենացու մատյանում **Կաւկաս** հատկանունը Ու հոլովիչով հոլովվել է չորս (Կաւկասու), Ո եւ Ա հոլովիչով՝ մեկական անգամ (Կաւկասոյ, Կաւկասայ)։

Օրինակ՝ Զվայրենի եկամուտ ազգն, որ զստորոտով մեծի լերինն **Կաւկասոյ** ... (Խոր., 108)։ Միաբանեալ բնակիչք հիւսիսոյ **Կաւկասու** ... (Խոր., 266)։ Իսկ ընդդէմ լերինն **Կաւկասայ** կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզօր ազգն (Խոր., 114)։

Այսպիսով, V դարի պատմիչների երկերում գրաբարի հոլովական զուգաձևությունների քննությունից կարելի է եզրակացնել՝

1. Գրաբարի կանոնավոր հոլովումների համակարգում հանդիպում են հոլովական զուգաձևություններ, որոնք ցույց են տալիս քերականական իմաստներ արտահայտելու լեզվի ներունակությունը։

2. Հոլովական զուգաձևությունները կամ նախագրային ժառանգություն են կամ ժամանակի լեզվամտածողության դրսևորումներ։

3. Հոլովական զուգաձևությունները ամբողջական գաղափար են տալիս գրաբարի հոլովական հարացույցի տարբերակային ձևերի մասին՝ համաժամանակյա կտրվածքով։

4. Զուգաձևություններն ի հայտ են գալիս սեռական հոլովում, որտեղ առանձնացվում են նրանց կառուցատիպերը. 1. Ո//Ի, 2. Ի//Ա, 3. Ո//Ու, 4. Ու//Ան, 5. Ա//Ու, 6. Ի//Ու, 7. Ա//Ո, 8. Եան//Ո, 9. Եան//Ի, 10. Ø//Ա կամ Ø//Ո։ Հոլովական զուգաձևությունների վիճակագրությունը ցույց է տալիս, որ առավել հաճախադեպ են բառի նախնական (առաջնային) հոլովիչի իրացումները։

5. Զուգաձևություններն ընդգրկում են թե՛ հատուկ եւ թե՛ հասարակ անունները, դրանք դրսևորվում են գոյականի թե՛ եզակի եւ թե՛ հոգնակի թվում։

6. Զուգաձևությունների վերոնշյալ կառուցատիպերը կենսունակ գործածություն ունեն հինգերորդ դարի մատենագիրների երկում։

РЕЗЮМЕ

В статье рассматриваются падежные параллелизмы в историографических трудах Егише, П.Бюзанда, Х.Парпеци, Агафангель и М.Хоренаци.

Падежные параллелизмы выявляются в родительном падеже, так как этот падеж является исходным падежом для флективных форм лексемы.

Параллелизмы классифицируются по структурным типом:

1. О//И (աղանդոյ - աղանդի) 3. О//У (երիցոյ - երիցու) 5. А//У (զօրաց - զօրուց) 7. А//О (Գնելայ - Գնելոյ) 9. Еан//И (ժողովրդեան - ժողովրդի) 11. О//У//А (Կաւկասոյ-Կաւկասու-Կաւկասայ)	2. И//А (Վրթանիսի - Վրթանայ) 4. У//Ан (մահու - մահուան) 6. И//У (վնասից - վնասուց) 8. Еан//О (ծննդեան - ծննդոյ) 10. Ø//А, Ø//О (հարց - հարանց, ջուրց - ջրոց)

Параллелизмы изучаются в разных грамматических категориях существительного: а) в единственном числе, б) во множественном числе, в) в нарицательных именах, г) в собственных именах.

Синхроническим методом выявляется, что в трудах историков V века падежные параллелизмы имели активную функцию наряду с нормативными падежными формами.

SUMMARY

In the article the declension doublets are being examined in the historiographic works of Eghishe, Ph. Buzand, Gh. Parpetsy, Agaphangel and M. Khorenatsy.

We categorized the structural types of declension doublets in the possessive case, which is a base for other flexion case forms.

The report reveals the following structural types of declension doublets:

1. O//I (աղանդոյ - աղանդի) 3. O //U (երիցոյ - երիցու) 5. A//U (զօրաց - զօրուց) 7. A//O (Գնելայ - Գնելոյ) 9. Ean//I (ժողովրդեան - ժողովրդի) 11. O//U//A (Կաւկասոյ-Կաւկասու-Կաւկասայ)	2. I//A (Վրթանիսի - Վրթանայ) 4. U//An (մահու - մահուան) 6. I//U (վսասից - վսասուց) 8. Ean//O (ծննդեան - ծնունդոյ) 10. Ø//A, Ø//Vo (հարց - հարանց, ջուրց - ջրոց)

The declension doublets are researched in the different grammatical aspects of a noun: a) singular form, b) plural form, c) common noun, d) proper noun.

Through the synchronic method, it is clear that the declension doublets in the Vth century had active functions as normative case forms.